

## ՊԱՏՄԱԳԻՏԱԿԱՆ

ԱՆՀԱՏԻ ԵՒ ՄԱՍՍԱՅԻ ԴԵՐԸ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԷԶ

Անհատի և մասսայի խնդիրն այլ կերպ արտայայտուած՝ պատմութեան նիւթի խնդիրն է։ Նայած այն հանգամանքին, թէ արդեօք անհատներն են պատմութիւն ստեղծողը թէ մասսաները, պատմութեան նիւթն ևս փոխում է ըստ այդմ։ Առաջին գէպքում պատմութեան նիւթ դառնում են այսպէս կոչուած մեծ մարդիկ. ուրեմն պատմութեան տեսակէտը կը լինի անհատական-ինգիվիդուալիտական. երկրորդ գէպքում — մասսաները. պատմութիւնը կը դառնայ ընդհանուր, կոլեկտիվիտական։

Այս երկու ուղղութիւններն ևս զօրեզապէս արտայայտուած են պատմագիտութեան մէջ թէ տեսականապէս, պատմափիլիսոփայութեան շրջանում, և թէ գործնականապէս, պատմագրութեան մէջ։

Ինգիվիդուալիտական պատմահայեցողութիւնը, որի ամենանշանաւոր ներկայացուցիչները տեսականի շրջանում անգլիացի փիլիսոփայ պատմաբան Կարլայլն է, ֆրանսիացի սոցիոլոգ Տարդը և ուրիշները, իսկ գործնականի շրջանում գրանց թիւը լեզէոն է — վարդապետում է, որ պատմութիւն ստեղծողը, համայն մարդկութեան ընվանդակ կեանքը առաջ տանողները մեծ մարդիկն են — հանճարները. գրանցից է կախուած որ և է ազգի զարգացման ընթացքը. Կարլայլը իւր յայտնի գրքի մէջ («On heroes, hero-worship and the heroic in history»). — Ես ձեռքիս տակ գերմաններէն թարգմանութիւնն ունիմ, Ռեկլամի հրատարակութեամբ) մի քանի խմբի է բաժանում մեծ մարդկանց. պատմութիւնն առաջ տանող մեծ անհատները կամ դիւցազներ են (դիցարանական հերոսներ), կամ մարդարէներ կամ բանաօտեղներ (Դանտէ, Շեքսպիր) կամ կրօնական ուե-

զորմատորներ են ու քահանաներ կամ գրողներ (Խուսո) և կամ քաղաքական պետեր-իշխաններ (Կրօմուէլ, Նազլուէն):

Մարդկութեան պատմութիւնն ահա գրանց ձեռքն է, այս գիւցազների և ուժորմատորների, բանաստեղծների և թագաւորների, որոնք բոլորն էլ հերոսներ են: Ամեն նորութիւն հասարակութեան մէջ, հասարակութեան բովանդակ կեանքը-կրօն, մորալ, գեղարուեստ, գիտութիւն, բոլորը, բոլորը անհատից է գալիս, անհատի եղակի գիւտն է: Հասարակութիւնը լոկ նմանւում է ստեղծագործող անհատին:

Մասսաների նմանութեան վրայ առանձնութէս կանգ է առնում: Գաբրիէլ Տարդը իւր մի նշանաւոր գրքի մէջ (Les lois des l'imitation—նմանութեան օրէնքները): Ի՞նչ բան է մեր ամբողջ կոլտուրան հարցեամ է Տարդ և պատասխանում:—միմիայն նմանութեան արդիւնք: Անհատի նախաձեւող, ստեղծագործող օրինակը գառնում է հասարակութեան համար նմանութեան առարկայ և կուլտուրայի առաջընթացութիւնն այնուհետև արտայայտում է այն չափի մէջ, թէ հասարակութիւնը ինչըան է նմանւում ստեղծագործող անհատի օրինակին: «Բնդհանուր պատմութիւնը—ասում է Կարլայլ—այն ամենի պատմութիւնը, ինչ որ մարդ այս աշխարհում արել է, վերջին հաշուվ մեծ մարդկանց հանգէս բերածի պատմութիւնն է: Արանք են եղել մարդկանց ուսուցիչները, առաջնորդները, հովանաւորողները և լայն մտքով ստեղծողներն այն ամենի, ինչ որ գոյութիւն ունի մարդկային աշխարհում: Ամբողջ աշխարհի պատմութեան հոգին, դա հէնց մեծ մարդիկ իրանք են:» (23, 24).

Ցրանսիացի Ժատենազիր Cousin-ը հետեւեալ բնորոշ խօսքերն է ասում մեծ մարդկանց համար: «Որ ևէ ժողովուրդ ամբողջապէս մեծ մարդկանց մէջ է, պատմութիւնը այդ ժողովուրդի մէջ հէնց այդ մեծ մարդկանց է որոնում: Բաց արէք պատմութեան գիրը, գուր այդտեղ կը տեսնէք միայն յատուկ անուններ: Հակառակն ի հարկէ անկարելի է, որովհետեւ մասսաները ոչինչ են: Նրանք մի բան

են, միայն մեծ մարդկանց միջոցով։ Պատմաբաններն իրաւացի են, երբ միմիայն մեծ մարդկանցով են զբազւում։ Ամեն բան աշխարհում մեծ մարդու շուրջն է և ամեն բան մեծ մարդու համար» (Cours d'histoires de la philosophie moderne, Leçon X).

Նոյն հոյեացքի մի այլ արտայայտութիւնն է Պատկալի Հետեւեալ նկատողութիւնը, «Եթէ Կլէոպատրայի քիթը մի փոքր կարճ լինէր, աշխարհի ամբողջ քաղաքական պատկերը այլ կերպարանք կընդունէր»։ Նապոլէոնը իւր անձնական հանճարով, իւր հակումներով ու ձգտումներով, իւր կեանքի ռւժով ու կարողութեամբ էր, որ զեկավարեց երկար ժամանակ քաղաքակիրթ մարդկութեան բախարչ Յուլիոս Կեսարի հանճարն էր, որ ստեղծեց Հռոմի կայսրութիւնը. Յիսուսի անձնական-անհատական օրինակն էր, որ մարդկութեանը սիրոյ և հեղութեան նորմաներ տուեց, ահա այս է ինդիվիդուալիստական գատողութեան ընդհանուր եղանակը։

Յայտնի է, որ յատկապէս Գերմանիայում այս ռւզզութիւնը խիստ զօրեղ է. բազմաթիւ պատմաբաններ իրենց հաստահատոր գրքերը մեծ մասամբ այդ ռւզզութեամբ են գրում. Սակայն նա ո՞նի նաև խիստ կատաղի հակառակորդներ, մանաւանդ Ֆրանսիայում, էլ չենք խօսում ի հարկէ սոցիալիստական ռւզզութիւնների մասին, որոնք բռնըն էլ հակառակորդ են ինդիվիդուալիստական պատմահայեցողութեանը։

Ֆրանսիացիներից յատկապէս Լուրդոն (Louis Bourdeau; L'histoire et les historiens, Paris, 1888) շատ զօրեղ կերպով քննադատում է անհատական պատմահայեցողութեան թէ տեսական և թէ գործնական մասերը. Ինդիվիդուալիստաները յենուում են մեծ մասամբ մեծ մարդկանց նշանակութեան վրայ. Բուրդոն քննում է այդ գաղափարը-ընթացքը-և գտնում է, որ դրա գաղտնիքը անահուն մասսաների այն խոր յարգանքի մէջ է, որ այդ մասսան տածում է դէպի մեծ մարդիկ, իսկ այդ յարգանքը ամենամեծ չափով առաջ է գալիս այն պատճառով, որ մասսան ան-

ծանօթ է այդ մեծ մարդուն, անծանօթութիւնն տեղի, ժամանակի կամ դիրքի Մասսան իդէալականացնում է նրանց ու չափազանցացրած է երեակայում նրանց անձնական արժանիքը, որովհետեւ լաւ չի ճանաչում Քանի մասսաները հերոսներին մօտիկից են ճանաչում, այնքան աւելի պակաս են զարմանում նրանցով Այդ է պատճառը, որ ներկայ և ծանօթ մոմենտը հերոս չի ճանաչում. այդ է պատճառը, որ մեծ հերոսները—ժողովրդական դիւցազները կամ ժամանակով շատ հեռու են, մոռացութեան մատնուած, հեռաւոր անցեալի մէջ թաղուած, կամ տարածութեամբ շատ հեռու, անծանօթ վայրերի մէջ։ Այդ մտքով պիտի բացատրել Քրիստոսի խօսքը, թէ ոչ ոք իր գուառի մէջ մարդարէ չէ։ Մեծ մարդիկը մեծ չեն իրօք. մեր մեծ իդէալներն են, որ մենք դնում ենք այս կամ այն մարդու մէջ. մեծ մարդկանց մէջ մենք զարմանում ենք ու հիանում մեր իդէալներով։ Խոկական հերոսը ոչ թէ այս կամ այն մարդն է, այլ մասսան ինքը—անծանօթ և անանուն մասսան։ «Հերոսի խոկական անունը լեզէօն է (Հմմտ. Բուրդո, 23.)։

Բանականութեան ուժը ոչ թէ մեծ մարդկանց մէջ է, ասում է Բուրդոն, այլ հենց մարդկային ցեղի, Յառաջադիմութիւնը—դա անանուն բանւորների աշխատանքի գործն է, պատմութեան մէջ չկայ բացարձակ գիւտ, Անմտութիւն է տսել, թէ այս կամ այն առարկան կամ ուժը այսինչ անհատն է գտել. նա միայն կատարելագործել է, աւելի յարմարեցրել. գիւտ չկայ ոչ գեղարաւեստի, ոչ կրօնի, ոչ արուեստների և ոչ էլ գիտութիւնների մէջ. ամեն ինչ կատարելագործւում է, յառաջադիմում։ Բուրդոն յենւում է այս կէտում Zherston-ի (Histoire de la machine à vapeur, 2 tome) հետեւալ եղրակացութեան վրայ. «Մեծ գիւտերը երբէք մէկի գործ չեն. որ և է մի գիւտ կամ յայտնագործութիւն արդիւնք է մեծ քանակութեամբ աշխատազների միահամուռ կամ յաջորդական ջանքերի».

Այն նիւթը, որ հեղինակը ընտրում է, այդ նիւթը մշակելու եղանակը. նրան բռնող ոգեորութիւնը, նրա

գործածած լեզուն, նրա հետեւած աւանդութիւնները, նրա առաջ բերած օրինակները, նրա փառքը—այդ ամենը նա մասսայից է ստանում, դրանց է գալիս նրա մէջ։ Բանաստեղծներն ու գրականները մի դրոշմ են տալիս ընդհանուր մտապատկերներին մի լեզով, որը իրենք չեն ստեղծել։ Կրօնների և քաղաքական սիստեմների հիմնագիրները ոչինչ են, եթէ ոչ ընթացիկ մտքերի համակրողներ։ Մարդկութիւնը կարող է կատարելապէս առանց այդնշանաւոր մարդկանց իւր ճամբան դնալ։ Նրանց գործը մի փոքր շտապեցնելն է այն ծաւալումը, որը ինքն իրան իրականանում է, առանց մեծ մարդկանց մրցակցութեան։ Առաւտեան աքաղաղների պէս իդէալների այս մեծ նախակարապետները կարող են մօտակայ արշալոյսը աւետել, բայց նրանք չեն, որ արելը բարձրացնում են։ (Բուրգո 101—102)։

Նոյն կարծիքները մի փոքր աւելի սահմանափակ կերպով յայտնում է նաև Հերբերտ Սպենսերի իւր Introduction à la science sociale (Paris, 1891) գրքի մէջ։ Նա ժխտում է այստեղ անհատի գերը և բացարձակօրէն յայտնում, թէ նիւտոնը, Միլտոնը, Արիստոտելը հասարակութեան արդիւնք էին և եթէ նրանք չլինէին, ուրիշը նոյն գերը կը կատարէր։

Անհատի և մասսայի խնդրի նկատմամբ Բուրգոյի պատմահայեցազութիւնը բաժանում են համարեա բոլոր սոցիալիստական ուղղութիւնները, մանաւանդ մարքսիստները։ Ամեն բան մասսան է տալիս, անհատը բնական անհրաժեշտութիւնների երկաթէ շղթայի մէջ դրուած մի օղակ է, զուրկ սեփական ձեռներէցութիւնից, զուրկ ինքնուրոյն կերպով մի նորութիւն առաջ բերելու, շրջապատը փոխելու թէ ընդունակութիւնից և թէ հնարաւորութիւնից։ Այս է պատճառը, որ ինդիվիդուալիստական պատմահայեցողութեան հակառակօրդները պատմութեան նիւթեն դարձնում ոչ թէ մեծ մարդկանց, ինչպէս դա շատ յաճախ տեղի է ունենում։ Գերմանիայում, այլ հասարակութիւններն ու ժողովուրդները, ընդունելով ամեն բանի

ազրիւր և սկիզբ մասսային, որը անուն չունի, որը սակայն ամեն ստեղծագործութեան յետեւմ թագնուած է:

Նորագոյն սոցիոլոգներից յատկապէս Ռուբդոն, Լ. Գումալովիչը և Գ. Ռացենհովերն են, որոնք ինդիվիդուալիստական պատմահայեցողութիւնը խիստ քննադատութեան են ենթարկում: Բովանդակ պատմագրութիւնը մինչև 19-րդ դար եղել է անհատների, թագաւորների և իշխանների, ուրիշ խօսքով մեծ մարդկանց կենսագրութիւնն ժողովուրդների, հասարակական գրուպպաների և մասսաների կեանքը բոլորովին բարձի թողի է արուել: Խրաբանչիւր պատմագիր գովել, փառաբանել է իւր ընտրած հերոսին: Քսենոֆոնի համար Առկրատը ամենակատարեալ մահկանացուն էր. («Առկրատին տեսնելիս ինձ թւում է, թէ նա այնքան կրօնական, այնքան արդար, այնքան հեզ, այնքան իմաստուն է, որ թւում է թէ նա ամենակատարեալ մահկանացուն է» Memoires sur Socrate IV 8, 32). Ալենանի համար ամենամեծ էակը Յիսուսն էր («Մարդկային զաւակների մէջ Յիսուսից աւելի մեծը չէ ծնուած» — Vie de Jesus 1967, 475), Quinte Curce-ի համար ամենամեծ հերոսը նեղէքսանդր Մակեդոնացին է, պատմաբան Թիէոսի համար նապոլէոնն է գերագոյն հիացմունքի արժանի հերոսը: Այսպիսով իւրաքանչիւր հեղինակի համար ամենամեծ մարդը նա է, որի կենսագրութիւնը նա գրում է (հմտ. Բուրդո, 151), Մեզ ինչ օդուտ, գիտական ինչ իմացութիւն է տալիս այս կամ այն մարդու պատմութիւնը, նրա կենսագրութիւնը. հարցնում է իրաւամբ Լ. Գումալովիչը: Պատմագիտական իսկական իմացութիւն տալ կարող է միոյն և միայն այն գիտական ուսումնասիրութիւնը, որը զբաղուած է մասսաների, ժողովուրդների պատմութեամբ: Սոցիոլական գրուպպաների կանոնաւոր, համաշափ կեանքի ուսումնասիրութիւնն է, որ պատմագիտական իմացութիւնն է տալիս, դա է, որ պատմութեան միակ և խկական նիւթն է: «Մենք ցանկանում ենք ճանաչել և իմանալ ոչ թէ մի քանի անձնաւորութիւններ, այլ ամբողջ մարդկութիւնը — բացականչում է Բուրդոն, եւ նրա այդ կոչից

ինչքան տարբեր է հնչում Կարլայլի մի հաստատութիւնը, թէ «Պատմութիւնը կենսագրութիւնների մի ժողովածու է լոկ», Հարկաւոր է թողնել այդ ու վարական սխալ և մաշուած ճանապարհը՝ ամբողջ հետաքրքրութիւնն ու ջանքը կենդրոնացնել առանձին անձնաւորութիւնների, անհատների վրայ. Հարկաւոր է մարդկութիւնը ճանաչել, մասսաներն ուսումնասիրել:

Ահա այս է մասսայական պատմահայեցողութեան քննադատութեան և պահանջների պատկերը. Սակայն խնդրին մի փոքր աւելի մօտ նայենք: Ընդունենք մի ըոսկէ, որ անհատներն են, որոնք իրանց այս կամ այն կարողութեամբ, ձգտումներով ու հակումներով ստեղծում են պատմութիւնը. Հարցնում ենք՝ որտեղից են այդ ձգտումները, այդ մտքերն ու հակումները, որտեղից այդ բնազգները, որոնք մեծ մարդկանց զեկավարում են. արդեօք դրանք մեծ մարդուն յատուկ են, նրան բնածին են, թէ նա մասսայից է ստանում, նրանից սնուում: Թողնելով մի կողմ ժառանգականութեան շատ վիճելի պրոբլեմը, մեզ թուում է, թէ Հարցի վերջին պատասխանն աւելի հաւանական է: Մենք միանգաւայն արդարացի ենք դտնում Սպենսերի հետեւալ խօսքը. «Մեծ մարդը նախ քան իւր հասարակութիւնը ձևակերպելը, պէտք է սպասի, որ ինքը այդ հասարակութիւնից կազմակերպուի, ապա թէ նրանից առածը տոկոսներով նրան վերադարձնի».—Մեծ մարդիկ, մտքի ու զործի հերոսները քարձր են իրանց շվալապատզ անհատներից իրանց կարողութիւնների աւելի քարձր քանակով. իրանց ըմբռնման աւելի բարձր աստիճանուով: Այս բանն ուկներս է և ընդհանուր ընդունելի նոյն իսկ ամենամոլեռանդ հակառակորդից: Մեծ մարդը—հանճարը աւելի շատ քան է տեսնում, աւելի խոր է զգում, աւելի ուղիղ և տրամաբանօրէն է դատում. նա ընդունակ է աւելի լաւ արտայայտել իւր զգացածը, իւր միտքը: Սրանից պարզ է, որ մեծ մարդը հասարակական շարժման մի անհրաժեշտ մասն է, աւելի անհրաժեշտ, քան այդ հասարակութեան միւս անդամները: Գործի, շարժումների, ժողովրդական

յուղաւմների դէպքում՝ հանդէս է գալիս մեծ մարդը որպէս միացնող, որպէս ժաղօվրդի մէջ ցրուած տարածուած ցանկութիւնների ուժեղ արտայայտիչ և այդ կողմից նա արադացնում, տոն է տալիս շարժմանը, դրանով գառնում մի անխուսափելի գործօն։ Այսքանն, ինչպէս ասացի, ընդունում են ինդիվիդուալիստական աշխարհայեցողութեան նաև մոլեուանդ հակառակորդները։ Այդքանով միայն տառում է, որ մեծ մարդիկ քանակական, աստիճանական տարրերութիւն ունին միայն և ոչ թէ որակի։

Սակայն մտաւորի շրջանում, մտածողութեան իմացուկան հարցերում բարձր քանակական գիտութիւնը, գիտելիքների տեղեկութիւնների աւելի բարձր աստիճանը տանում է աննկատելի կերպով որակով տարրեր իմացութեան։ Բոլորովին համոզիչ եմ՝ զտնում Հեգելի այն նկատողութիւնը, թէ քանակական տարրերութիւնները իրանց շարունակութեան ընթացքում կարող են գառնալ որակական։ Այս նկատողութիւնը ընդհանուր է թէ հոգեկան և թէ ֆիզիկական աշխարհի նկատմամբ։ Յայտնի է, որ ցուրտը մրսեցնում է մեղ. բայց եթէ ցրտի աստիճանը հետզհետէ բարձրանայ և մեծ չափերի հասնի, այն ժամանակ մեր ցլոտի զգայութիւնը, որ գնալով քանակի կողմից ուժեղանում էր, փոխուում է վերջը՝ այլ զգայութեան։ այլ ևս մենք ցուրտ չենք զգում, այլ բոլորովին ուրիշ զգացում է մեզ տիրում։ շատ դէպքերում սաստիկ ցուրտը կարծես մեղ վառում է, այրում, ուրեմն քանակական տարրերութիւնները իրանց շարունակութեան վրայ կարող են փոխուել և փոխուում են որակականիւ ռով որ մտածողութեան մէջ աւելի հետեղական և տեական է քան ուրիշները, նա ձեռք է բերում ոչ միայն իմացութեան մի մեծ չափ, մի բարձր աստիճան, այլ ևս մի նոր տեսակի իմացութիւն։ Նա ընդունակ կը լինի իրերը բոլորովին այլ լոյսի մէջ տեսնել, քան նրա ընկերները և շատ անդամ՝ նրա մոքի առաջ նոր հորիզոններ են բացւում, որ նրան ընդունակ են դարձնում նորանոր գիւտերի, ձեռնարկութիւնների (Բարթ. 220)։ Այդտեսակ ստեղծագործական մտքերն ու

լնդունակութիւնները աշխատանքի, սովորեցնելու միջոցով չեն գալիս, այլ մենաշնորհ են այդ մեծ ողիներին:

Այդ մարդիկն են ահա, որ զինուած իրանց ցեղի, շրջապատի, այս, նոյն իսկ մարդկութեան ձեռք բերած գարսւոր իմաստութեան պառողներով, միևնոյն ժամանակ իրանց բնական ձիրքով կարողանում են մարդկութեան միջից իրանց առածը հարիւրաւոր տոկոսներով յետ դարձնել. դրանք են, որ շմշակուած գաշտերի մշակումն են սկսում, որ նոր շրջաններ, նոր հեռանկարներ են բաց անում և իրանց յետեկից նմանողների լեզէններ քաշ տալիս (Բարթ. 221).

Երբ ինդրին այս կողմից նայենք, միանգամայն անարդար ու միակողմանի է թւում վերոյիշեալ կարծիքը, թէ անհատը գեր չունի պատմութեան մէջ, թէ պատմական կեանքը—մասսայի պատմութիւնն է և ոչ անհատների մարդկութեան պատմութիւնը, ժողովուրդների խմբակցութիւնների պատմութիւնն է, բայց ովքեր են այդ խըմբակցութիւնների բովանդակութիւնը—անդամները. անհատներն են, որոնք բնականորէն միատեսակ չեն օժտուած, միատեսակ չեն հասկանում, մտածում և զգում, Պատմութիւնը ժողովուրդների կեանքն է ուսումնասիրում և նրանց կեանքով պիտի զբաղուի. բայց ժողովուրդների կեանքը արտայայտում է փոքր ու մեծ անհատների գործերի ու մոքերի մէջ և այդ տեսակէտից բնական է, որ մեծ մարդիկ պատմութեան մէջ իրանց տեղը պիտի ունենան միշտ որպէս որ և է ժողովուրդի գործելակերպի, մտածելակերպի ամենաուժեղ, ամենացայտուն արտայայտիչները. Անհատն հասարակութեան մէջ և հասարակութիւնն անհատի հետ միայն կազմում են պատմութեան նիւթ.

Գերմանական պատմութեան մէջ անհրաժեշտ չէ յիշել և մանրամասն կանգ տռնել նրանց բազմաթիւ թագաւորների, իշխանների կենսագրութեան, մոքերի ցանկութիւնների վրայ. բայց ով գրում է գերմանական ժողովուրդի պատմութիւն, ով հետաքրքրում է գերման ցեղի հօգեկան-մտաւոր յատկութիւններով, նրանց մասսայական հակառակութիւններով:

ըով և ցեղական աենդենցներով ու բնազդներով, ուրիշ խօսքով՝ ով ուզում է որ և է իմայութիւն ձեռք բերել գերման ցեղի մտքի, հագու մասին, նա պէտք է մանրաւ մասն զբաղուի Գեօթէով, Բիսմարկով ու Բեոկլինով. որովհետեւ այդ մարդիկը ամենից աւելի ցայտուն կերպով են արտայայտում այդ ժողովուդի հոգին, ցանկութիւնները, մտքերը:

Ով գրում է Հայոց պատմութիւնը հինգերորդ դարում, անշուշտ պիտի յիշի, թէ ինչքան զօրեղ էր զգացւում այն ժամանակ սեփական Հայկական գրականութիւն ունենալու կարիքը: Անհրաժեշտ չէ և հնար էլ չկայ բոլոր մարդկանց անուններն առաջ բերել, որոնք զգում էին այդ կարիքը, որովհետեւ դրանով պատմութիւնը մի բան չի շահում: Բացց անխօսավելիօրէն պէտք է երկար կանգ առնել Սահակի և Մեսրոպի և նրանց աշակերտների առաջ բերած շարժման, ձեռնարկած քայլերի վրայ, որովհետեւ նրանք էին, որ այդ կարիքն ամենից ուժեղ էին զգում և նրանք էին, որ օժտուած էին այդ կարիքին բաւարարութիւն տալու կարողութեամբ. մասսան նրանց թև էր տալիս, այդ մասսան նորագարձ հայ քրիստոնեաններն էին, Ե. գարի Հայոց պատմութիւնն առանց գրերի գիւտի և նրա հեղինակիւանհասկանալի կը մնայ:

Պատմութիւնը թագաւորների, իշխանների կենսագրութիւն չէ, այլ ժողովրդական շարժումների, մասսայական կամքի, մտքի ու զգացմունքի և դրանց արտայայտողների՝ մեծ մարդկանց պատճառաբանեալ շարահիւսուած վերաբարդութիւնը:

16-րդ դարում Եւրոպայում գիտական մի մեծ վէճ կար, մարդիկ գլուխ էին պատռում և իրար հետ վիճում, թէ արդեօք արեն էր, որ պտտում էր երկրի չուրջը, թէ երկիրն էր, որ արեի շուրջն էր դառնում: Մարդիկ ուզում էին սլանեատային օխատեմի գործողութեան կենդրութիւններ ձիշտ այդպիսի մի հարց էլ ձագել է բազմաթիւ փիլիսոփանների և պատմաբանների զլիսում: 19-րդ դարի ընթացքում, որ գեռ մինչև օրս, ի հարկէ հետզհետէ թու-

լանալով զբաղեցնում է հետախոյզ գլուխներին։ Մարդիկ երկու կարելիութիւն են ընդունում և այդ երկուսից միայն մէկը հնարաւոր համարում։ մասսան է, որ պատում է մեծ մարդկանց շուրջը թէ մեծ մարդիկն են, որ պատում են մասսայի շուրջը։ Ահա այս է ալտերնատիւը և այդ հարցի լուծումից էլ կախուած է պատմութեան նիւթը։ Սակայն ինչպէս արդէն վերեւում ակնարկեցինք, հարցը սխալ է դրուած և լուծումը ընականորէն միակողմանի կարող է ստացուել։ Մեծ մարդիկը ֆիզիքապէս վերցրած որպէս անհատներ պատկանում են մասսային, գուրս են գալիս մասսայից և կախուած են մասսայից։ Նրանք ևս զեկավարում են այն ընդհանուր օրէնքներով, որոնք մասսայի համար զեկավարող են։ Միւս կողմից մեծ մարդիկ իրանց մտաւոր և հոգեկան բարձր որակով, տարբեր աստիճանի աշխարհով, իրանց բազմաթիւ ու բազմազան ընդունակութիւններով միանգամբ գրաւում են մասսան իրանց կողմը և մարդկային կեանքի զանազան շրջաններում օրինակ, տիպար, զարմանքի առարկայ հանդիսանում բազմութեան համար։ Այդ տեսակէտից, մասսան շատ բաներում վազել է ձգտում իւր հերոսների յետեւից, դիմում է նրանց ու իւր ոգեսորաւթեան ազդիւր շինում։

Երբ այսպէս երկուստեր ընդունենք ազդեցութիւնները, երբ անհատն ու մասսան փոխադարձապէս ազդում են իրար վրայ, իրար լրացնում և իրար ամրողացնում, ապա ուրեմն պատմութեան նիւթն ևս պարզում է բոլորովին։ Պատմութիւնը պիտի զբազուի ուրեմն մասսայի ընդհանուր կեանքով, նրա զարգացմամբ, նրա աճումով ու այն երեսյթներով, որոնք հանդէս են գալիս մասսայի մէջ ու կրում են ոչ եզակի, անհատական բնաւորութիւն, այլ հասկանալի և բացատրելի են ընդհանուր մասսայական տեսակէտներից։ Այդ կողմից է, որ մեծ մարդիկը կարող են պատմութեան նիւթ դառնալ, միայն որպէս մասսայի ցայտուն ներկայացուցիչներ, միայն, որպէս մասսայական յատկութիւնների ուժեղ և սեղմ խուցումներ—կարող են և պէտք է մեծ մարդիկը պատմութեան մէջ տեղ ունենան։

Անմիտ գարձուածքներ են, երբ մարդիկ ասում են, թէ որ Նապոլէոնը չլինէր, մի ուրիշը ուրիշ անունով դուրս կը գար և նրա գործը կը կատարէր. կամ բոլորովին սխալ դրութիւն է Սպենսերի խօսքը, թէ Նիւտոնն ու Արքատուելլա, Միլտոնն ու Շեքսպիրը եթէ չլինէին, ուրիշ անձնաւորութիւններ դուրս կը գային նրանց գերը կատարելութայց բաւական միամիտ է նաև Քանոնապոլի առարկութիւնը, որ նա անում է Սպենսերին—ասելով. «Եթէ այդպէս լինէր, առաջ ինչու միննոյն շրջանի մարդիկը բոլորը հանճարներ դուրս չեն գալիս, ինչու օրինակ Նիւտոնի ժամանակակից անգլիացիները ձգողական ուժ չգտան բոլորը, կամ Բեթովենի ժամանակակից գերմանացիները չգրեցին նրա սիմֆոնիաները» (Les princ. fond. d. l'his. 155):

Մեծ մարդկանց—պատմական նշանաւոր դէմքերի հանդէս գալը մենք նմանեցնում ենք հրաբխային երեսյթին. Երբ գետնի տակը ընական զանազան ուժերի ներհակութիւնն ու հակամարտութիւնն այն աստիճանի է համառմ, որ բռնկումն այլ ևս անխուսափելի է դաշնում, ահա այդ ժամանակ նա տեղ է օրոնում պատռելու գետնի կեղելը և դուրս ժայթքելու—և հէնց որ յարմար տեղ դաշտ, նա դուրս է թափում. Լաւ ան ժողովրդական յոյզերի ու ժորժերի, նրա զանազան խաւերում եփող և պատրաստող շարժումն է, նա մասսան ինքն է. իսկ այն տեղը գետնի կեղելի այն մասը, որով լաւան դուրս է ժայթքում—դա ինքը մեծ մարդն է—հերոսը, ասել, թէ ինչու լաւան Վեզուվի կամ Էտնայով դուրս եկաւ և ոչ օրինակ Մոնսրանով կամ Ազգեօղով, նշանակում է ի նկատի չառնել լեռների երկրաբանական, ֆիզիկական առանձնայատուկ կազմը, որն ի հարկէ կառոււած է դարձեալ ամբողջ երկրի և առիեղերքի հետ և առանձին երրեք բացատրելի չէ. Եսյն յարերութիւնը նաև մասայի և անհատի մէջ կայտ եթէ բոլոր լեզուներով գրութական գրաւած ֆրանսիական յեղափոխութեան պատմութեան մէջ Նապոլէոնը կենդրոնական տեղ է բռնում—այդ օխար չպիտի հասկանալ, իսկապէս այդտեղ ոչ թէ Նապոլէոնն է կենդրոնը, այլ այն զգաց-

մունքներն ու մտքերը, որոնք վարում էին Նապօլէոնին, այդ մտքերն ու ձգտումները ֆրանսիական ժողովրդի մէջ էին, Ֆրանսիայինն էին—պայմանաւորուած երկրի, ժողովրդի գարաւոր պատմութեամբ Ամբողջ շարժման և ապագայ կայսրութեամբ կենդրոնը ֆեոդալական, միջնադարեան կապանքներից ազատուելու տենչանքն էր, ազատութիւն տնտեսական-քաղաքական կապանքներից և գեղի Անդլիան տածած ած գարաւոր առելութիւնը, որը նոյնպէս պայմանաւորուած էր քաղաքական, անտեսական մրցակցութեամբ։ Այդ երկու զգացմունքներն ահա, ամենից ուժեղ Նապօլէոնի մէջ էին անձնաւորուել, որը, բացի այդ զօրեղ զգացմունքներից ունէր նաև զօրեղ միջոցներ արտայայտելու նաև իւր ընդունակութիւններով կարծղ էր նաև ուրիշներին գրգել, ստիպել այդ մտքերի կատարմանը դիմելու, այդ է ահա պատճառը, որ պատմութեան մէջ Նապօլէոնի անունը ամենից բարձր է հնչում, ամեն անուն խրացնում, ամեն անուն կլանում—քանի ի հարկէ նա կրող և արտայայտիչ է հանգիսանում այդ մտքերին, զգացմունքներին և իդէալներին։ Այն բոլորից, երբ նա դուրս է գալիս ազգեցնեթիւնների և գործազութիւնների շրջանից, նա հետաքրքիր չէ այլ ևս պատմութեան համար Նապօլէոնը ու Հեղինէ կղզու վրայ—պատմութեան նիւթ չէ այլ եօ, որովհետեւ նա այլ ևս չի ապրում ու չի գործում այն դրդումներով ու շարժիչ ուժերով, որոնք չարժում և առաջենտանում մազովութների կեանքը։ Մի քանի պատմացաններ անարդար է միակողմանի են, երբ Նապօլէոնից են ծագել տալիս ամեն բան, երբ նրան ստեղծող և զեկավարող են համարում իւր գայիք, բայց բոլոր պատմաքաններն արդարացի են, երբ նրան ժամանակի նշանաւորագոյն գէմքն են համարում։

Այս նոյն եղանակով կարելի է և պէտք է բացատրել որևէ այլ մեջ ամրգու և մասսայի յարաբերութիւնները։

Մի հանգամանք էլ կայ, որ չողիսի վրիսի մերուչաղդրութիւնից, անհատի գործունէութեան և ազդեցութեան շրջանը մեծապէս կախուած է այն կուլտուրայի առարկա-

նից, որի մէջ նա ծնուած է ու կօչուած գործելու։ Պատմավիլիսոփայութեան մէջ այժմ յաճախ է լուռում այն կարծիքը, թէ կուլտուրական ոտորին աստիճանի վրայ գտնւող ժողովուրդների կամ վայրենի ցեղերի մէջ անհատականութիւն չկայ բնաւ. այնտեղ անհատը ոչ մի ինքնուրոյն առանձնայատուկ գիծ չունի, որով ազըի ընկնէր և բարձրանար իրան շրջապատող գորշ մակերեսոյթից. նա այնտեղ մտածում և գործում է այնպէս, ինչպէս Շոլոր միւսները, ուստի և այդպիսի պրիմիտիւ հասարակութիւնների մէջ անհատը տիպ է միւնոյն ժամանակ. այսինքն այդ հասարակութեան իւրաքանչիւր անդամ կարող է նոյն հասարակութեան տիպիկական ներկայացուցիչ համարուել։ Այդ կարծիքը յատկապէս թափ է առնում այն օրից, երբ գերմանացի Յակոբ Բուրգքարդը իւր նշանաւոր «Ռընեսանսի կուլտուրան» է գրում (Jakob Burckhardt—Kultur der Renaissance), որի մէջ նա այն հայեացըն է հիմնաւորել աշխատում, թէ մինչև Ռընեսանս չկար անհատականութիւն և թէ Ռընեսանսի հանդէս գալը միւնոյն ժամանակ անհատականութեան ծննդեան ժամն է։ Վերջին ժամանակներու յատկապէս կարլ Լամպիլեխտն է, որ իւր բազմահատոր «Գերմանական պատմութեան» մէջ և մանր քննադատական գրուածքներում այդ միտքը պաշտպանում և ընդլայնում է։

Բերլինի պրոֆ. Էդուարդ Մայերը, որի անունը աշխարհ հռչակուեց յատկապէս նրա «Հին դարի պատմութեան» համար և որը պատմափիլիսոփայական շատ հարցերում ինքնայտուկ դիրք է գրաւում, այս հարցի նկատմամբ միանգամայն համերաշխ է գնում վերև առաջ բերած հայեացըներին։

Մարդկային պատմութեան հին շրջաններում առանձին անհատը, ինչքան էլ որ նա անկախ և ազգատ գործելիս լինի, միշտ, ամենավճռական բոպէներին ստիպուած է որոշ հաստատուն ձևեր և մտապատկերներ ընդունել, որպէս օրյեկտիւ տուեալներ, որոնք նրա կամքից դուրս են, որոնք սակայն նրա գործն ու կամքը պայմանաւորում են. նա

անգօր է դրանց դէմ. նրա մտքով անգամ չի անցկենայ, որ նա կարող է այդ օբյեկտիւ հանգամանքները փոխել, եւ քանի կուլտուրան առաջ է գնում, քանի բազմազան է դասնում մարդկային հասարակութեան կեանքը, այնքան անհատի հոգին գիֆերենցիայի է ենթարկում, այնքան աւելի մեծ հնարաւորութիւն է հանդէս գալիս անհատական առանձնայատկութիւնները նկատելի դարձնել ու շատ անգամ հասարակական տենչանքների հետ համերաշխ լինելու դէպքում, նաև ուժեղապէս արտայայտել ու այդպիսով դառնալ բռպէի տէրը-հերոս:

Ապացոյց այն բանին, որ անհատը—մեծ մարդը իւր գործի ընթացքում կախուած է հասարակութիւնից ու նրանից է իսկապէս զեկավարում և տարւում, կարող է ծառայել այն հանգամանքը, որ առօրեայ կեանքի մէջ և պատմութեան ընթացքում գործող անհատը անհրաժեշտորէն հոգեկան կամ մտաւոր արտակարգ ընդունակութիւնների տէր չպիտի լինի անպատճառ։ Ի հարկէ, պատմութեան մէջ եղել են անձնաւորութիւններ և ներկրոյումն էլ կան, օրոնք ներքին հոգեկան հարուստ բովանդակութեամբ, ստեղծագործական ուժով և ձիրքերով բոլոր ժամանակակիցներից գերազանցել են և նոր ուղղութիւնների, նոր ճանապարհների ռահճիրաններ եղել—բայց և դրանք և իրանց դարում անլուելի կը մնային և կամ իրանք իրանց ներքին կրակից կայրուէին ու կը տապակուէին (ինչպէս շատերի հետ եղել է ու ամեն օր լինում է), երբ որ արտաքին աշխարհում, նրանց շրջապատող հասարակութեան մէջ պակասէր այդ մեծ մարդկանց ցանկութիւնները դլուխ հանելու հնարաւորութիւնը, կառկած չկայ, որ իւրաքանչիւր ժամանակ անշուշտ հանճարեղ մարդիկ շատ է ծնում. միլիոնների և հարիւրաւոր միլիոնների մէջ բազմաթիւ կը լինի անշուշտ հանճարների թիւը, բայց նրանք չեն երևում, փոքր ու մանր հանգամանքների մէջ ապրում և մեռնում են առանց հետք թողնելու և հէնց այն պատճառով, որ արտաքին աշխարհը ոչ մի կերպ ընդառաջ չի գնում նրանց ցանկութիւններին։

Միւս կողմից յաճախ գիտուել է, որ պատմութեան և առօրեայ կեանքի մէջ շատ անգամ հասարակական նշանաւոր պաշտօնների ու գիւքերի են հասնում այնպիսի մարդիկ, որոնք անչով չեն բարձրանում միջակութիւնից. Քայց չնայած դրան կարողանում են զլուխ ըերել և իրագործել կարեար փոփոխութիւններ և ռեֆորմներ, յատկապէս հէնց այն պատճառով, որ մթնոլուտը—իրականութիւնը պատրաստի հող է ներկայացնում նրանց համար. նրանք լոկ կատարողներ են լինում հասարակական ցանկութիւնների ու ձգտութների, լոկ անօթներ Այդ տեսակ անձնաւորութիւնների պատմական արժեքը բարձր չէ և անտարբեր է, որովհետեւ մի ուրիշը հեշտութեամբ կարող էր նրան փոխարինել. Այս խնդրում էականն այն է, թէ արդեօք հասարակութիւնը ձաւլող հարցերի հակամարտութիւնը, հասարակութիւնը կազմող տարբեր ուղղութիւնները հաւասար ուժեր են, այնպէս որ վճռական գործի բանալին մի հատիկ անձնաւորութեան կամքի ուժեղ արտայայտութեան մէջ փնտուել հնարաւոր լինի. Եթէ հասարակական սոցիալական բնոյթը այդպիսի մի մամենտ ունենայ և այդմամենտում հանդէս գայ մեծ մարդք կամ հերօսը—նակարող է մեծ ազդեցութիւն և պատմական խոշոր ու անջնջելի հետք թողնել պատմութեան ընթացքի վրայ. Այդպէս են եղել մի կարլ Մեծ, մի Նապոլէօն.

Աակայն նրանց նշանակութիւնն ու ազդեցութիւնն են պէտք է վերցնել միշտ յարաբերական մտքով. ոչ թէ մի քանի դարերի կամ այնիսկ հազար տորիների համար այլ մարդկային պատմութեան ամբողջ ընթացքի դիմաց Այդ տեսակէտից կարող ենք վճռակի ասել, որ պատմութեան մէջ վերջի վերջոյ ոչինչ չի փոխուել և նրա ընթացքի վրայ շատ աննշան է այն հանդ աժանքի ազդեցութիւնը, որ պատմական մի որեւէ թէկուղ շատ յայտնի երեսյթ մի քանի տասնեակ տարի ուշանայ կամ նոյնիսկ մի փոքր այլ տեսակ կատարուի. Մարդկային պատմութիւնը տասնեակ ու հարիւր հազար տարիներով է շափուռմ, ունի իւր կայուն և անփոփոխ տեսնդենցները, որոնք չեն կախուած առան-

ձին անհատների, թէկուզ հերոսների կամքից։ Անհատներն  
իրանք են, որ աղդւում են այդ հանգամանքներից։

Հետաքրքիր է Բիսմարկի մի արտայայտութիւնը, որը  
մեզ համար առանձնապէս կարևորութիւն է ստանում մա-  
նաւանդ այն պատճառով, որ ինդիվիդուալիստական պատ-  
մահայեցողութեան կողմնակիցների համար Բիսմարկն ևո-  
համարում է ամենամեծ անձնաւորութիւններից մէկը, որ  
ստեղծեց գերմանական միութիւնը և ընթացք տուեց գեր-  
մանական յետագայ պատմութեանը։ Նա ասում է, «Պե-  
տական գործիչը մենակ ոչինչ չի կարող անել, նա կարող է  
սպասել միայն և ականջ գնել, մինչեւ որ Առուծոյ ոտ-  
նաձայնը եղելութիւնների միջով լսելի լինի. ահա այն ժա-  
մանակ նա առաջ է թռչում և նրա պատմուճանի քղանցքը  
ըռնում. այդ է բոլորը, որ նա կարող է տնել»—(Lidner,  
Geschichtsphilosophie, II. Aufl. 1904. Կրես 63.)

Անհատի և մասսայի փոխազդեցութիւնն է ասացինք,  
որ ծնունդ է տալիս պատմութեանը։ Խդէան ծնունդ և  
գալիս է անհատից, ինչպէս և նրա իրագործումը, բայց  
նրա հասունացումը զուտ մասսայական է և կոլեկտիվ  
(Meyer Ed. 182):

Պատմութեան նիւթն այս տեսակէտից նայած կը ինք  
մասսաների և անհատների վախադարձ ազգեցութիւնների  
և պարագաների համար վարող ուժերի միօլինակ  
և կանոնական չարտդրութիւնը մշակութայի մայութայի  
շաբաթ չափար կահմ քաղաք է Նոյն գանձունք Արքունիք միջ  
ո՞ւ Ֆարան շղթանց աղմ նութե Յոյշոք և մամթառացուն  
խոհաւ շայո , մասնաւուայաւոյն նախուար ավելից ք մարդ  
փուաց ։ Տ Ն արտաւոց ու շառա ուրեմն պահ Տ Ն արդար  
զարդի մաս մամթառայախանուա հյուն ուն մամթարս օւրեմ  
դյու և պահան մն Ն առաջարկութեանց հյուն ։ Երդու սեղաց  
ոյաք մայտանատակայ շայո նախուա Տ ուր ժիգիտ և դաշու ջի  
մամթառայ պահարձ պահան դրաց մայտան ընութեանց մայտ  
մայտ ։ Տ ուր դամացանց շամ մամթառայախանուա հյուն առա մամթա  
րաց շաբիցին և (դմանանեայ քառականու պահի) անդամա  
լուսուաց հյուն մատ նախուա Տ ուր ամ մամթառայ  
ամ մայտ մամթառայախանուա Ընդուն և դման քամ մամթառա